ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվար, 2023 թվականի № 11-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի № 71-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 2023 թվականի փետրվարի 6-ին ներկայացված թիվ Ռ/23–01-10 գրությունը և հաշվի առնելով լսողական ծրագրերի հաղորդացանցերի պարբերական բարելավման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Փոփոխել Հանրային հեռարձակողի խորհրդի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի № 71-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) № 2 հավելվածով հաստատված՝ Ընկերության «Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո») լսողական ծրագրի՝ 2023 թվականի փետրվարի 13-ից մինչև 2023 թվականի փետրվարի 28-ը ներառյալ հեռարձակման համար նախատեսված հաղորդացանցը՝ այն շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

10 փետրվար, 2023 թվականի

ք. Երևան